Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-582-05.05.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «Ոստիկանության զորքերի հրամանատար» բառերից հետո լրացնել «-ոստիկանության պետի տեղակալ» բառերը, իսկ «Ոստիկանության պետի տեղակալ» բառերը փոխարինել՝ «Գլխավոր վարչության պետ-ոստիկանության պետի տեղակալ» բառերով,

2) 4-րդ կետում «հատկապես կարևոր գործերով ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկան» բառերով, «ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «ավագ քրեական ոստիկան» բառերով, «օպերլիազոր» բառը փոխարինել «քրեական ոստիկան» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանության պարեկային ծառայության, քրեական ոստիկանության և հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունների պետերն ի պաշտոնե Ոստիկանության պետի տեղակալներ են:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասում «պարեկի և ավագ պարեկի բառերը» փոխարինել «պարեկի, ավագ պարեկի, քրեական ոստիկանի, ավագ քրեական ոստիկանի և հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկանի» բառերով.

2) լրացնել 6.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.2. Քրեական ոստիկանի պաշտոնում կարող են նշանակվել միայն այն անձինք, ովքեր ունեն առնվազն բակալավրի որակավորում և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են քրեական ոստիկանի նախնական մասնագիտական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը քրեական ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում կատարվում է բացառապես Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններ, ինչպես նաև քրեական ոստիկանի, ավագ քրեական ոստիկանի և հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկանի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման երեք տարին մեկ անգամ:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը կիրառելի է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում քրեական ոստիկանի նախնական մասնագիտական կրթություն ստացած՝ առաջին հոսքի շրջանավարտների նկատմամբ, որոնց շնորհվում է առնվազն ոստիկանության լեյտենանտի կոչում, ինչպես նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտած և քրեական ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվող ոստիկանության ծառայողների նկատմամբ: Այդ շրջանավարտները և ծառայողները համարվում են հավելավճար նախատեսող ատեստավորում անցած: Մինչև քրեական ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոնների նշանակվելը ատեստավորում անցած ծառայողների ատեստավորման արդյունքները պահպանվում են մինչև քրեական ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը չի տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի

շրջանակում «Իրավագիտության բակալավր» և «Իրավագիտության մագիստրոս» մասնագիտական որակավորում ստացած այն շրջանավարտների վրա, ովքեր նշված որակավորումները ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ ~~4-րդ կետում «հատկապես կարեւոր գործերով ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «հատկապես կարեւոր գործերով ավագ քրեական ոստիկան» բառերով, «ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «ավագ քրեական ոստիկան» բառերով, «օպերլիազոր» բառը փոխարինել «քրեական ոստիկան» բառերով:~~

1) <u>1-ին կետում «Ոստիկանության զորքերի հրամանատար» բառերից հետո լրացնել «-ոստիկանության պետի տեղակալ» բառերը, իսկ «Ոստիկանության պետի տեղակալ» բառերը փոխարինել «Գլխավոր վարչության պետ-ոստիկանության պետի տեղակալ» բառերով,</u>

2) 4-րդ կետում «հատկապես կարեւոր գործերով ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «հատկապես կարեւոր գործերով ավագ քրեական ոստիկան» բառերով, «ավագ օպերլիազոր» բառերը փոխարինել «ավագ քրեական ոստիկան» բառերով, «օպերլիազոր» բառը փոխարինել «քրեական ոստիկան» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանության պարեկային ծառայության, քրեական ոստիկանության և հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունների պետերն ի պաշտոնե Ոստիկանության պետի տեղակալներ են:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասում «պարեկի և ավագ պարեկի բառերը» փոխարինել «պարեկի, ավագ պարեկի, քրեական ոստիկանի, ավագ քրեական ոստիկանի և հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկանի» բառերով.

2) լրացնել 6.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.2. Քրեական ոստիկանի պաշտոնում կարող են նշանակվել միայն այն անձինք, ովքեր ունեն առնվազն բակալավրի որակավորում և Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են քրեական ոստիկանի նախնական մասնագիտական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում

ունեցող ծառայողների նշանակումը քրեական ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում կատարվում է բացառապես Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 1.1-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ոստիկանության պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման՝ կրտսեր և միջին խմբի պաշտոններ, ինչպես նաև քրեական ոստիկանի, ավագ քրեական ոստիկանի և հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկանի պաշտոններ զբաղեցնող ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման երեք տարին մեկ անգամ:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը կիրառելի է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում քրեական ոստիկանի նախնական մասնագիտական կրթություն ստացած՝ առաջին հոսքի շրջանավարտների նկատմամբ, որոնց շնորհվում է առնվազն ոստիկանության լեյտենանտի կոչում, ինչպես նաև Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտած և քրեական ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվող ոստիկանության ծառայողների նկատմամբ: Այդ շրջանավարտները և ծառայողները համարվում են հավելավճար նախատեսող ատեստավորում անցած: **<u>Մինչև քրեական ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոնների նշանակվելը ատեստավորում անցած ծառայողների ատեստավորման արդյունքները պահպանվում են մինչև քրեական ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը:</u>**

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը չի տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում «Իրավագիտության բակալավր» և «Իրավագիտության մագիստրոս» մասնագիտական որակավորում ստացած այն շրջանավարտների վրա, ովքեր նշված որակավորումները ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-582-05.05.2023-ՊԱ-011/1/) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է պարեկային ծառայության, քրեական ոստիկանության եւ հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունների պետերի պաշտոնները նախատեսել ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ: Հակառակ դեպքում հասկանալի չէ՝ նշված գլխավոր վարչությունների պետերը զբաղեցնում են ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն, թե բարձրագույն խմբի պաշտոն, ինչը խնդրահարույց է նաեւ այն տեսանկյունից, որ Օրենքով սահմանված են տարբեր կարգավորումներ ոստիկանության գլխավոր և բարձրագույն խմբերի	**Ընդունվել է:** **Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	

			պաշտոնների համար: Ըստ այդմ Նախագծի 1-ին հոդվածի «1-ին մասի» բառերից հետո լրացվել է նոր դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «1) 1-ին կետում «Ոստիկանության զորքերի հրամանատար» բառերից հետո լրացնել «-ոստիկանության պետի տեղակալ» բառերը, իսկ «Ոստիկանության պետի տեղակալ» բառերը փոխարինել՝ «Գլխավոր վարչության պետ-ոստիկանության պետի տեղակալ» բառերով,», Իսկ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նախատեսված դրույթը շարադրվել է որպես հոդվածի 2-րդ կետ:		
2.	***<< կառավարություն***	Նախագծի 5-րդ հոդված (Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է ատեստավորված ոստիկանության ծառայողների համար նախատեսել դրույթ, որով մինչև քրեական ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը կպահպանվեն ատեստավորման արդյունքները: Ըստ այդմ նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվել է նոր նախադասություն՝ հետևյալ	**Ընդունվել է:** **Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	

			բովանդակությամբ. «Մինչև քրեական ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոնների նշանակվելը ատեստավորում անցած ծառայողների ատեստավորման արդյունքները պահպանվում են մինչև քրեական ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը:»:		